

ՏԱՐԻՄԱԱՍ ՓՈԽԱՏԵՂԱԿԱՆ ՀՈՄԱՆՈՒՆԵՐ

Ե. Յ. ՊԵՎՈՐԳՅԱՆ

Փոխատեղական հոմանունների իմաստաբանական քննությունը ցույց է տալիս, որ դրանք լինում են երկու կարգի՝ նույնիմաստներ և տարիմաստներ: Ստորև կանդրադառնանք միայն վերջիններին:

Տարիմաստ փոխատեղական հոմանունները կարելի է բաժանել երկու մասի՝ մերձիմաստներ, որոնք քանակությամբ անհամեմատ քիչ են, և հեռիմաստներ, որոնք մեծամասնություն են կազմում: Մերձիմաստային բառազույգերի անդամներն արտահայտում են միմյանցից քիչ տարբերվող իմաստներ և, ինչպես կտեսնենք, ավելի մոտ են նույնիմաստներին, քան հեռիմաստներին: Մատնանշում են այնպիսի առարկաներ, վիճակներ, ուղղություններ, հատկանիշներ, գործողություններ, որոնք, ընդհանրություններ ունենալով հանդերձ, ինչ-որ կողմերով զանազանվում են միմյանցից: Ասվածը պարզաբանենք հետևյալ օրինակներով: «Մարդակապիկ» բառը նշանակում է կապիկ, որն ունի մարդու հետ ընդհանուր հատկանիշներ. «կապկամարդ» բառը նշանակում է մարդ, որն անցել է էվոլյուցիոն ճանապարհ, բայց դեռևս կապիկի հետ ունի ընդհանուր հատկանիշներ: Եթե **բանավիճելիս** (գրավոր կամ բանավոր) հրապարակայնորեն գիտական հարցեր են վիճարկում, ապա **վիճաբանելիս** խոսքակոչվ են տալիս, վիճում: «Կարմրադեղին» ածականի դեպքում հիմնական գույնը դեղինն է, կարմիրը երկրորդական է, այսինքն՝ ունենք կարմրավուն դեղին, իսկ «դեղնակարմիր» ածականի դեպքում հիմնական գույնը կարմիրն է, դեղինը երկրորդականն է, այն է՝ դեղնավուն կարմիր: Ի հայտ է գալիս հայերենին բնորոշ բառակազմական հատկանիշը. հիմնականը վերջին արմատն է, իսկ նախորդները լրացյալ են: Ահա այս կերպ «ջրացելիս» բառը մատնանշում է ցելիս, որը ջրալի է, թթվաքաղցր՝ քաղցր, որը թթվաչ է, գորշակապույտ՝ կապույտ, որը գորշավուն է: Նշվածների փոխատեղական գույգերը համապատասխանաբար՝ ցելիսաջուր՝ ջուր, որին ցելի է խառնված, քաղցրաթթու՝ թթու, որը քաղցրավուն է, և կապտազորշ՝ զորշ, որը կապտավուն է: Ասվածը դիտարկենք նաև եռարմատ փոխատեղական հոմանուններում, որոնցում հիմնական իմաստն արտահայտող արմատից առաջ երկու արմատ կա: Ավազակավառոտ՝ նստվածք կամ հող, որում ավազը շատ է, իսկ կավը՝ քիչ: Եվ կավաավազահող, որում կավը շատ է, ավազը՝ քիչ: Կաթնայուղատու՝ յուղայնությունը ցածր կաթ տվող և յուղակաթնատու՝ յուղայնությունը բարձր կաթ տվող:

Այսպիսով. եթե նույնիմաստների դեպքում բառերի «լեզուն» համընկնում է թվերի «լեզվի» հետ, ապա տարիմաստների դեպքում վիճակն այլ է: Այսինքն՝ միևնույնը չէ, ունենք՝ (a+b), թե (b+a): Տարիմաստներում գումարելիների՝ արմատների, ածացների փոխատեղումից գումարը՝ իմաստը, փոխվում է: Երևույթն ավելի շոշափելի է նկատվում հեռիմաստային փոխա-

տեղական բառագույգերի անդամներում: Դիտարկենք բառակազմական բաղադրիչների ներքին շարահյուսական հարաբերությունը դրանցում: Այստեղ այդ հարաբերություններն ավելի բազմազան են: Որոշ դեպքերում ընդգրկում են բազմաթիվ ուրիշներում՝ մի քանի բառագույգ: Կան անդամներ էլ, որոնցում քննվելիք հարաբերությունը կարելի է բացատրել մի քանի կերպ: Մենք կանգ կառնենք հիմնական դեպքերի վրա, որոնք ցույց են տալիս բառային բաղադրիչների ներքին շարահյուսական միանշանակ մեկ հարաբերություն, և բառագույգերը շատ են:

ա. Բառում բաղադրիչներից առաջինը կարելի է բնորոշել իբրև հատկացուցիչ, երկրորդը՝ հատկացյալ: Առկա է պատկանելության գաղափարը: Այս կերպ «անվանատառ» բառը դիտում ենք իբրև անվան տառ (ընդունված է ազգանունը գրել լրիվ, իսկ անունը, հայրանունը՝ անվանատառերով): Փոխատեղական հոմանվան մեջ՝ տառանուն, նախորդի հատկացուցիչը հատկացյալի նշանակություն ունի, իսկ հատկացյալը՝ հատկացուցչի: Շարահյուսական ներքին հարաբերությունը, ինչպես կտեսնենք, ի տարբերություն ուրիշ դեպքերի, չի փոխվել, փոխվել են բաղադրիչների դերերը՝ բերելով այլ բառիմաստ՝ տառի անուն (այբուբենը կազմված է տառանուններից՝ այբ, բեն, գիմ...): «Բառասկիզբ» բառում հատկացուցիչ է դիտվում «բառ» բաղադրիչը, և հատկացյալ՝ «սկիզբ»-ը: Փոխատեղականում՝ սկզբնաբառ, հակառակն է, քանի որ իմաստն է՝ սկզբի բառ: Եվ կամ. գլխուկր (գլխի ոսկոր) և ոսկրագլուխ (ոսկորի գլուխ): Հատկացուցիչ-հատկացյալի փոխատեղումը կատարվում է «գլուխ» ու «ոսկր» բաղադրիչներով: Նույն մոտեցումով հաջորդ բառագույգերում կունենանք. ջրիոր (ջրի հոր)-հորաջուր (հորի ջուր), կովաբլոր (կովի ավազան) - ավազան (ավազանի կով), սկզբնատող (սկզբի տող) - տողասկիզբ (տողի սկիզբ), աղբյուրաջուր (աղբյուրի ջուր) - ջրաղբյուր (ջրի աղբյուր):

բ. Բառագույգի անդամներից մեկում դարձյալ բաղադրիչների հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությունն է, իսկ մյուսում՝ որոշիչ-որոշյալի՝ բնութագրողի և բնութագրվողի հարաբերությունը: Սա նշանակում է, որ փոխատեղման հետևանքով մեկի հատկացյալը մյուսում դառնում է որոշիչ, իսկ հատկացուցիչը՝ որոշյալ: Եվ ելնելով ասվածից՝ «երակազարկ» բառը կարող ենք վերլուծել իբրև երակի զարկ (բաբախյուն), մինչդեռ նրա գույզը՝ զարկերակ, իբրև զարկող (բաբախող) երակ: Նույն կերպ. երգչախումբ՝ երգիչների խումբ - խմբերգիչ՝ խմբական երգիչ: Խաղասկիզբ՝ խաղի սկիզբ-սկզբնախաղ՝ սկզբնական խաղ (շախմատում): Այսպիսով, ներկա դեպքում ունենում ենք թե՛ ներքին շարահյուսական հարաբերություն, թե՛ բառիմաստի փոփոխություն: Հմտ. մակ՝ խեժաբույր (խեժի բույր) - բուրախեժ (բուրավետ խեժ), մավակայմ (մավի կայմ) - կայմանավ (կայմ ունեցող մավ՝ առագաստանավ), շենքամաս (շենքի մաս) - մասնաշենք (մաս կազմող շենք), տերևափուշ (տերևի վրայի փուշ) - փշատերև (փշակերպ տերև):

գ. Երկու անդամում էլ բաղադրիչների որոշիչ-որոշյալի հարաբերությունն է՝ միայն դրափոխված. այն է՝ մեկի որոշյալը մյուսում դառնում է որոշիչ, և որոշիչը՝ որոշյալ: Այդ կերպ են կազմված բուսաղեղ (բուսական դեղ)- դեղաբույս (դեղի բույս), դրամանվեր (դրամական նվեր) - նվիրադրամ (նվիրվող դրամ), եղեգնաշաքար (եղեգից ստացվող շաքար) - շաքարեղեգ (շաքարային՝ շաքարի եղեգ) գույգերը: Ինչպես ա կետի հատկացուցիչ-

հատկացյալի դեպքում, այժմ բաղադրիչների շարահյուսական ներքին հարաբերությունը չի փոխվում, սակայն դա չի խանգարում, որ առաջանա մեկ այլ բառիմաստ: Հմնտ. նաև՝ բուսայուղ (բուսական յուղ)-յուղաբույս (յուղատու բույս), խմբապար (խմբական պար)-պարախումբ (պարային խումբ), կաթնաթթու (կաթնային թթու)-թթվակաթ (թթու կաթ), նավասպորտ (նավային սպորտ)-սպորտանավ (սպորտային՝ մարզական նավ), թելաբույս (թելատու բույս)-բուսաթել (բուսական թել):

դ. Բառագույգի անդամներից մեկում բաղադրիչների որոշիչ-որոշյալ հարաբերությունն է, մինչդեռ մյուսում՝ ուղիղ խնդրի և խնդրառուի հարաբերությունն է: Խնդրառու երկրորդ բաղադրիչում է, որը կարող է լինել բայական, գոյականական կամ ածականային արմատ: Արմատների փոխատեղումն այժմ էլ իր հետ բերում է շարահյուսական ներքին այլ հարաբերություն և այլ բառիմաստ: Այս կերպ «կերաբույս» բառը վերլուծելիս ունենում ենք՝ կերի (կերային) բույս, իսկ նրա փոխատեղական գույգի՝ «բուսակեր» - ի դեպքում՝ բույս ուտող (բույսերով սնվող): Նույն կերպ. նենգախաղ (նենգ խաղ)-խաղանենգ (խաղը նենգող), պահատեղ (պահելու համար հատկացված տեղ) -տեղապահ (տեղը պահող): Այս կետի փոխատեղական հոմանուններում քանակով նկատելի է «սեր» արմատով կազմված բառագույգերի խումբը: Այդ գույգերից են՝ սիրերգ (սիրային երգ) - երգասեր (երգ սիրող), սիրարվեստ (սիրային՝ սիրելու արվեստ)-արվեստասեր (ավեստ սիրող), սիրավեպ (սիրային վեպ)-վիպասեր (վեպ սիրող), սիրադեղ (սիրային՝ սիրո դեղ)-դեղասեր (դեղ սիրող), սիրախաղ (սիրային խաղ)-խաղասեր (խաղ սիրող), սիրարկած (սիրային արկած)-արկածասեր (արկած սիրող) և ուրիշներ:

ե. Բառագույգի անդամներից մեկում դարձյալ որոշիչ- որոշյալի հարաբերությունն է, իսկ մյուսում՝ միջոցի անուղղակի խնդրի և խնդրառուի հարաբերությունը: Այս կերպ «բուժաբույս» բառը վերծանելիս կունենանք՝ բուժիչ բույս, իսկ նրա փոխատեղականից՝ «բուսաբույժ» -ից՝ բույսերով բուժող: Նույն կերպ «ցատկածող» բառում՝ ցատկելու ձող, և «ձողացատկ»՝ ձողով ցատկ, ցատկելը, մարտասուսեր (մարտական սուսեր) և սուսերամարտ (սուսերով մարտ): Արմատների փոխատեղումը դարձյալ հանգեցնում է ներքին շարահյուսական այլ հարաբերության և այլ բառիմաստի:

Սույն կետի փոխատեղական հոմանուններում աչքի են զարնում «ծածկ», ապա նաև «զարդ» արմատներով կազմված բառագույգերի խմբերը: Առաջիններից հիշենք ծածկապակի (ծածկող ապակի)-ապակեծածկ (ապակիով ծածկ/վ/ած), նույն կարգի կառուցվածքով հմնտ. հաջորդները՝ ծածկազերան-զերանածածկ, ծածկաթիթեղ-թիթեղածածկ, ծածկաթադանթ-թաղանթածածկ, ծածկաթեփ- թեփածածկ, ծածկականար-կամարածածկ, ծածկապանել-պանելածածկ և այլն: Երկրորդներից են. զարդածառ (զարդ հանդիսացող ծառ)-ծառազարդ (ծառերով զարդարված): Նույն կառուցվածքն է հաջորդներում. զարդանախշ-նախշազարդ, զարդանկար-նկարազարդ, զարդաքանդակ-քանդակազարդ, զարդաբույս-բուսազարդ, զարդածանյակ-ծանեկազարդ, զարդերիզ-երիզազարդ, զարդապատկեր-պատկերազարդ:

զ. Բառագույգերում անդամներից մեկում որոշիչ-որոշյալի հարաբերություն է, իսկ մյուսում՝ ստացման խնդրի և խնդրառուի հարաբերություն:

Խնդրառում դարձյալ երկրորդ բաղադրիչում է, որը կարող է լինել բայական, գոյականական կամ ածականային արմատ: Այս կետի փոխատեղական հոմանունների մեջ աչքի են ընկնում «ձույլ» և «շեն» արմատներով կազմված բառազույգերը: «Ձույլ» արմատը անդամներից մեկում հանդես է գալիս որպես առաջին բաղադրիչ «ձույլ» հնչյունափոխված տարբերակով և արտահայտում է «ձուլածո» ածականի իմաստը: Մյուս անդամն արտահայտում է ինչից ձուլված (ձուլած) լինելու իմաստը: Ինչպես. ձուլապակի (ձուլածո ապակի)-ապակեձույլ (ապակուց ձուլ/վ/ած), ձուլերկաթ (ձուլածո երկաթ)-երկաթաձույլ (երկաթից ձուլ/վ/ած), ձուլոսկի (ձուլածո ոսկի)-ոսկեձույլ (ոսկուց ձուլ/վ/ած): «Շեն» արմատն անդամներից մեկում արտահայտում է «շինարարական» ածականի իմաստը, իսկ մյուսում՝ ինչից շինած (շինված)՝ կառուցված իմաստը: Շինափայտ (շինարարական փայտ)-փայտաշեն (փայտից շին/վ/ած), շինաքար (շինարարական քար)-քարաշեն (քարից շին/վ/ած):

Հեռիմաստության քննված վեց դեպքերից բացի՝ կան նաև այլևայլ դեպքեր, որոնք ընդգրկում են զանազան բնույթի սակավաթիվ բառազույգեր: Վերջիններիս մի մասում անդամներից մեկում կարող է լինել որոշիչ-որոշյալի, մյուսում՝ ներգործող ուղիղ խնդրի և խնդրառուի հարաբերություն (խեղդահագ-հագախեղդ), ուրիշներում՝ մեկ անդամում՝ որոշիչ-որոշյալի, մյուսում՝ միասնության կամ այլ պարագայի իմաստ (խառնաբարբառ-բարբառախառն), երրորդներում՝ երկու անդամում էլ ուղիղ խնդրի և խընդրառուի հարաբերություն (սիրավանդ-ավանդասեր), չորրորդներում՝ մի անդամում առկա է ուղիղ խնդրի, մյուսում՝ ներգործող ուղիղ խնդրի իմաստ (հալածասեր- սիրահալած) և այլն, և այլն:

Այսպիսով՝ իմաստային տարբերակումը պայմանավորված է բառազույգերում արմատաձանցային բաղադրիչների ներքին շարահյուսական հարաբերությամբ:

Е. У. ГЕВОРКЯН — *Разнозначные перестановочные омонимы.* —

Члены определенных лексических пар перестановочных омонимов выражают разные значения. Это происходит в силу того, что компоненты таких членов внутри слова находятся в определенных синтаксических отношениях, и они неравносильны. При перестановке меняются их синтаксические роли. Вследствие этого меняются синтаксические отношения, а также значение слова. Такие перестановочные омонимы называются разнозначными и бывают близкими и далекими по значению.